որոտում էր մի խուլ, ծանր դղրդիւնով: Ինձ երեւում էր մի հսկայական մրջնանոց, որտեղ փոքրիկ միջատների փոխարէն, խառնուած էին միմեանց հետ ահագին բազմութիւն մարդիկների եւ զանազան անասունների: Շները, ստոար խումբերով, համարձակ վխտում էին ամէն կողմում: Փողոցներից անցնելու տեղ չկար: Ղավազները մեզ համար ճանապարհ էին բաց անում: Ամէն կողմից ես նկատում էի մռայլ դէմքեր, որոնք մի առանձին դառնութեամբ նայում էին մեզ վրայ: Մահմեդականը չէր կարող համբերել, երբ տեսնում է «գաւուրին» փոքր ի շատէ վայելուչ կերպարանքի մէջ: Ասլանը մի եւրոպական կոնսուլի կամ դեսպանի տպաւորութիւն էր գործում: Իսկ ես այնօր, նրա պատոիրելով, կրում էի իմ բոլոր զէնքերը. մի զոյգ ատրճանակ կապած էին իմ ձիու թամքի ղաշին, մի զոյգ եւս խրած ունէի գօտիիս մէջ. ուսիցս քարշ էր ընկած մի թեթեւ եւրոպական հրացան, իսկ իմ սուրը իր արծաթեայ զարդարանքով կարող էր գրաւել բոլորի ուշադրութեանը: Հայերի վրայ եւս, որպէս երեւում էր, ոչ այնքան հաճելի տպաւորութիւն էր գործում մեր փառքը: Նրանք չէին նախանձւում, այլ վախենում էին՝ չզայրացնել մահմեդականներին: Իրանց փոքրիկ խանութներում, խորասուզուած զանազան փարչաների մէջ, նրանք զբաղուած էին իրանց արշինով եւ չէին ուզում նայել անգամ մեզ վրայ:

Վերջապէս հասանք փաշայի ապարանքը: Դրսից նա այնքան փառահեղ չէր, իսկ ներսից շնչում էր արեւելեան բռնապետի բոլոր շռայլութեամբ: Ձրի շատրոանները գործում էին, սիրամարգները սիգալով ճեմում էին ծաղկազարդ պարտէզների մէջ, սեւամորթ եւ սպիտակամորթ սպասաւորները թիւ չունէին: Մի բարձր աստիճանաւոր ապարանքի գրլխաւոր մուտքի առջեւ ընդունեց մեզ: Մենք անցանք մի քանի բակերից, որոնք մինը մեօսից աւելի գեղեցիկ էին: Խաղացող ջուրը, ծաղիկը եւ կանաչեղէնը, արեւելքցու սիրելիները, կենդանացնում էին բոլոր բակերը մի սքանչելի սրտապարար շքեղութեամբ: Սենեակների լուսամուտները զարդարուած էին գոյնզգոյն ապակիներով, իսկ նրանց պատերի վրայ նկարուած պատկերները ներկայացնում էին զանազան առասպելաբանական աւանդութիւնների գեղեցիկ տեսարաններ:

Այդ տերեւների եւ ճոխութեան մէջ ծածկուած բնակարանը, որ սովոր էր ամբողջ գիշերները լուսացնել նոագներով, երգերով ու պարերով, ուր շալերի, մետաքսի եւ գոհարների մէջ հանգչում էին երկրի ամենաընտիր գեղեցկուհիները, այդ սիրոյ եւ վայելչութեան դրախտ էր, միեւնոյն ժամանակ մի դժոխք՝ լի սոսկումով եւ արտասուքով: Նրա ներքին հարկի ստորերկրեայ զնդաններում հեծում էին հարիւրաւոր բանտարկեալներ: Վերեւում, շքեղ